# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 69-Ա

### ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

Հաստատել համայնքի ղեկավարի ներկայացրած Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2019 թվականի սեպտեմբերի 9-ի նիստի օրակարգը

1.ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2.ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

3. ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ի N10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N27 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

4.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,9 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

5.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

6.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

7.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

8.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

9.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

10.ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11.ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

12.ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13.ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

14.ՍԱՄՎԵԼ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ-ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

15.ԱՎԱԳ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՁԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

**Համայնքի ղեկավար՝** ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 70-Ն

## ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, ,,Բյուջետային համակարգի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 5-րդ մասի ,,բ,, կետի, 33-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը և ֆինանսական բաժնի պետի զեկույցը (զեկույցը կցվում է) **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Համայնքի 2019թ. բյուջեի վարչական մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 1-ի:

2. Համայնքի 2019թ. բյուջեի ֆոնդային մասի ծախսերը վերաբաշխել համաձայն հավելված 2–ի:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Զեկույց

## Մասիս քաղաքային համայնքի 2019 թ. բյուջեի վարչական և ֆոնդային մասերում փոփոխություններ կատարելու մասին

Մասիսի քաղաքապետարանի և ՄԱԶԾ-ԳԷՖ «Քաղաքային Կանաչ լուսավորություն» էներգախնայողության ծրագրի շարունակականությունը ապահովելու և գիշերային երթևեկությունը ավելի անվտանգ դարձնելու նպատակով անհրաժեշտ է Երևանյան, Հանրապետության փողոցների որոշակի հատվածների և Մասիս-Չարբախ խճուղու ԴՆԱՏ լուսատուները թվով 111 հատ փոխարինել 100w հզորությամբ 5 տարվա երաշխիք ունեցող LED լուսատուներով : Լուսատուների մեկ հատի շուկայական արժեքը 40 000 դրամ է : Լուսատուների ձեռք բերման համար անհրաժեշտ է 4 440.0հազար դրամ: Միաժամանակ առաջարկվում է իրականացնել նորագույն տեխնոլոգիաներով փորձնական ծրագիր: Կենտրոնական հրապարակում տեղակայված 85w հզորությամբ երեք լուսատուներ անհրաժեշտ է փոխարինել արևային լիցքավորվող լուսատուներով, որոնք չեն պահանջում սպասարկում, չեն ծախսում էլեկտրաէներգիա և ունեն 3 տարվա երաշխիք: Արևային լուսատուների մեկ հատի շուկայական արժեքը 150,0հազար դրամ է, 3 հատի համար անհրաժեշտ է 450,0 հազար դրամ: Գիշերային լուսավորության արդիականացման ծրագրի շարունակականության իրականացման համար անհրաժեշտ է ընդհանուր 4890,0 հազար դրամ:

Մասիս համայնքում տեղակայված համայնքի սեփականություն համարվող աղբամանները շահագործման ընթացքում մաշվել, փչացել և հետագա օգտագործման համար դարձել են ոչ պիտանի, աղբահանության ժամանակ առաջացնում են խնդիրներ: Քաղաքում աղբահանությունը պատշաճ մակարդակով իրականացնելու համար առաջարկվում է ձեռք բերել 65 հատ ժամանակակից, 1,1մխ տարողությամբ ցինկապատ աղբամաններ քաղաքի կենտրոնական մասերում տեղակայված աղբամանները նորերով փոխարինելու համար: Նոր ձեռք բերվող աղբամանները կլինեն ներկա աղբամաններից տարողությամբ կրկնակի անգամ ավելի մեծ, նախատեսված երկարաժամկետ օգտագործման համար և կպահպանեն քաղաքի արտաքին տեսքը: Աղբամանի մեկ հատի շուկայական գինը165,0 հազար դրամ է, 65 հատ ձեռք բերելու համար անհրաժեշտ է 10725,0 հազար դրամ:

Համայնքում բնակչության անվտանգության, մարդկանց և մեքենաների մոնիտորինգի, հանցագործությունների կանխարգելման նպատակով առաջարկվում է քաղաքի Երևանյան, Հանրապետության, Արարատյան փողոցներում, Մասիս-Չարբախ և էջմիածին խճուղու հատման հատվածներում տեղադրել

տեսադիտարկման սարքեր թվով 20 հատ: Շուկայի ուսումնասիրությունից պարզվել է, որ տեսադիտարկման համակարգի տեղադրման համար անհրաժեշտ է 7230,0 հազար դրամ:

2019թ. օգոստոս ամսին համայնքը ձեռք է բերել ճանապարհների գծանշման, ճանապարհային երթևեկության նշանների տեղադրման սխեմա: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ շուտով սկսվում էր ուսումնական տարին, բյուջեում առկա 600,0 հազար դրամով քաղաքի խիտ երթևեկելի և ուսումնական հաստատություններ տանող ճանապարհների որոշակի հատվածներում կատարվել է գծանշման աշխատանքներ, նշված հատվածներում խիստ կարիք կա նաև իրականացնելու գծանշման աշխատանքներ, որի համար անհրաժեշտ է լրացուցիչ 300,0 հազար դրամ:

Համայնքի թիվ 5 մանկապարտեզ ՀՈԱԿ-ում առկա շենքային պայմանները հնարավորություն են տալիս բացելու 2 խումբ 60 երեխայով: Մանկապարտեզի չգործող մասնաշենքը կարիք ունի հիմնանորոգման և ջեռուցման համակարգի անցկացման: Նշված աշխատանքների իրականացման համար անհրաժեշտ է 250,0 հազար դրամ՝ նախագծանախահաշվային աշխատանքներ պատվիրելու համար:

Վերոնշյալ կապիտալ ծախսերը կազմում է ընդհանուր 23395,0 հազար դրամ: Առաջարկվում է անհրաժեշտ դրամական միջոցները հատկացնել տարվա ընթացքում գնումներով մրցույթներից առաջացած խնայողություններից, այն է՝

14 և 18 շենքերի բակերի բարեկարգման աշխատանքներից՝ 7699.0 հազար դրամ, Մասիս Կայարանի թիվ 12 շենքի տանիքի հիմնանորոգումից՝ 2569.0 հազար դրամ, թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգումից՝ 7000.0 հազար դրամ,

փողոցների լուսավորման համակարգի կառուցումից՝ 6127.0 հազար դրամ:

Նկատի ունենալով , որ քաղաքապետարանի աշխատակիցների պատշաճ արտաքին տեսքը կարևոր դեր է խաղում քաղաքապետարան հաճախող այցելուների կողմից քաղաքապետարանի նկատմամբ վստահության ձևավորման, ցույց է տալիս հարգանք գործընկերների և քաղաքացիների նկատմամբ, առաջարկվում է քաղաքապետարանի կին աշխատակիցների համար ձեռք բերել միանման հագուստ, որի համար անհրաժեշտ է հատկացնել 1000.0հազար դրամ:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ համայնքում մեծացել է պահանջը համայնքի սեփականություն հանդիսացող հողերի ձեռք բերման նկատմամբ, աճուրդներ կազմակերպելու և օտարելու համար անհրաժեշտ է կատարել չափագրման աշխատանքներ, որի համար բյուջեում նախատեսված միջոցները սպառվել են և

անհրաժեշտ է լրացուցիչ 300.0 հազար դրամ օտարման համար նախատեսվող հողային միավորները չափագրելու համար:

Համայնքի գրեթե բոլոր բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերը և կոյուղագծերը գտնվում են վթարային վիճակում և հաճախակի են դարձել բնակիչներից դիմում բողոքները վթարների վերաբերյալ: Որոշակի շենքերում, որտեղ ավելի հաճախակի են ջրագծերի և կոյուղագծերի վթարները, մինչև տարեվերջ ընթացիկ նորոգում իրականացնելու համար անհրաժեշտ է բյուջեից հատկացնել 4000.0 հազար դրամ:

Առաջարկվում է վարչական բյուջեի ծախսերը հատկացնել՝ պահուստային ֆոնդից 1300.0 հազար դրամ, քաղաքի աղբահանության ծառայությունների գնման մրցույթից առաջացած խնայողությունից՝ 4000.0 հազար դրամ:

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Ֆինանսական բաժնի պետ Ն. Սահակյան

Հավելված 1
Համայնքի ավագանու
,,__09__,, ___09___,, 2019 թ. Թիվ 70-Ն որոշման

## Մասիս քաղաքային համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի ծախսերի վերաբաշխումը

| *h/h* | *բաժին* | *խումբ* | *դաս* | *Գործառական դասակարգում, նպատակ* | *հոդված* | *Ծախսեր Գումարի չափը /հազար դրամ/* |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | 11 | 1 | 2 | Վարչական բյուջեի պահուստային ֆոնդը նվազեցնել | 4891 | -1300,0 |
| 2 | 01 | 1 | 1 | Քաղաքապետարանի ապարատի կին աշխատողների համար միանման հագուստի ձեռք բերում | 4261 | 1000,0 |
| 3 | 01 | 6 | 1 | համայնքի սեփականություն հանդիսացող հողերի չափագրման համար | 4241 | 300,0 |
| 4 | 05 | 1 | 1 | Աղբահանության ծառայությունները նվազեցնել | 4213 | -4000,0 |
| 5 | 06 | 1 | 1 | Բազմաբնակարան շենքերի նկուղների ջրագծերի և կոյուղագծերի ընթացիկ նորոգման համար | 4251 | 4000,0 |
| | | | | ***Ընդամենը*** | | ***0,0*** |

Աշխատակազմի քարտուղար՝ Վ. Գաբրիելյան

ֆինանսական բաժնի պետ՝ Ն.Սահակյան

Հավելված 2

Համայնքի ավագանու

,,__09__,, ___09___,, 2019 թ. Թիվ 104 որոշման

# Մասիս քաղաքային-համայնքի 2019 թվականի բյուջեի ֆոնդային մասի ծախսերի վերաբաշխումը

| *հ/հ* | *բաժին* | *խումբ* | *դաս* | *Գործառական դասակարգում, նպատակ* | *հոդված* | *Գումարի չափը /հազար դրամ/* |
|---|---|---|---|---|---|---|
| **1** | 01 | 6 | 1 | Տեսադիտման համակարգի ձեռք բերում | 5122 | 7230 |
| **2** | 04 | 5 | 1 | Ճանապարհների գծանշման աշխատանքներ | 5113 | 300 |
| 3 | 05 | 1 | 1 | Աղբամանների ձեռք բերում | 5122 | 10725 |
| 4 | 06 | 4 | 1 | Համայնքի փողոցների լուսավորման համակարգի համար LED և արևային լուսատուների ձեռք բերում | 5122 | 4890 |
| 5 | 09 | 1 | 1 | Թիվ 5 մանկապարտեզի մասնաշենքի հիմնանորոգման նախագծանախահաշվային աշխատանքներ | 5134 | 250 |
| 6 | 06 | 1 | 1 | 14 և 18 շենքերի բարեկարգման աշխատանքներ | 5113 | -7699 |
| 7 | 06 | 1 | 1 | Մասիս Կայարանի թիվ 12 շենքի տանիքի հիմնանորոգումից | 5113 | -2569 |
| 8 | 06 | 4 | 1 | Փողոցների գիշերային լուսավորության ցանցի կառուցում | 5112 | -6127,0 |
| 9 | 09 | 1 | 1 | Թիվ 2 մանկապարտեզի հիմնանորոգումից | 5113 | -7000,0 |
| | | | | ***Ընդամենը*** | | ***0,0*** |

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

ֆինանսական բաժնի պետ Ն.Սահակյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 71-Ա

### ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2005 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-ի N10 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 17-Ի N27 ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 28-րդ կետի, ,,Նորմատիվ իրավական ակտերի մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1.Հաստատել ,,Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի թիվ 1, թիվ 2, թիվ 3, թիվ 4, թիվ 5, թիվ 7 մանկապարտեզ,, համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կանոնադրությունները նոր խմբագրությամբ համաձայն 1-ից 6 հավելվածների:

2.Ուժը կորցրած ճանաչել Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2010 թվականի սեպտեմբերի 17-ի ,,Մասիս քաղաքի մանկապարտեզների կանոնադրություններում փոփոխություն կատարելու մասին,, N27 որոշումը:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 1

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9_Ի N _______ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի

N ___________________ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

_______________ Դ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

<< >> 2019թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ _2_ ՕՐԻՆԱԿ ________
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ 17.02.2006

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 77.210.00879
ՀՎՀՀ 03803948
17.02.2006թ. ԳՐԱՆՑՎԱԾ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 02/02 ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
<< >> << >> 2019թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԹԻՎ 1 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Մասիս 2019թ.

# I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.«Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 1 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ: Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի ավագանու 28.12.2005թ. թիվ 10 որոշման համաձայն, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 1 մ/մանկապարտեզ» բյուջետային հիմնարկի (գրանցված պետռեգիստրում 26.11.1996թ. գր.համարը 770007 վկ.համարը Բ000851) վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

3. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն Արարատի մարզ, Մասիս քաղաք, Ն/թ. Դպրոցականների փ. 3, 0801:

4.Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Կազմակերպությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12. Կազմակերպությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է կազմակերպության մեջ ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքի տարրական կարողություններին ու հմտություններին ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

13. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Կազմակերպությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

15. Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Կազմակերպության, երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Կազմակերպություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Կազմակերպությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Տարիքային խմբերում կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները սահմանվում են կրթական ծրագրերով:

20. Նախադպրոցական ուսումնական հաստատություն կարող են ընդունվել նաև ներառական կրթության կարիք ունեցող երեխաներ:

21. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան:

22. Կազմակերպությունում երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

23. Կազմակերպության աշխատակիցները պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24. Կազմակերպության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

25. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

26. Կազմակերպության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

27. Երեխայի և կազմակերպության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

28. Կազմակերպությունում աշխատանքի են ընդունվում այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

29. Կազմակերպության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:
30. Կազմակերպության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու կազմակերպության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):
32. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:
33. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ՝ կազմակերպության հիմնադրումը.

բ)Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ)Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ)Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է)Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

36. Կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով կազմակերպությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

37. Տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է կազմակերպության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

41. Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

42. Երաժշտական ղեկավարը՝

ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ, իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

43. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումը և պահպանությունը.

բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և ֆինանսական միջոցները:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

48. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը ըստ օրենքի:

50. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, համայնքի ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Կազմակերպությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

զ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ — ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ — ՌՈՒԲԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 2

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9_Ի N _______ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի

N ____________________ ՈՐՈՇՄԱՄԲ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

______________ Դ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

<< >> 2019թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ _2_ ՕՐԻՆԱԿ
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 17.02. 2006թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 77.210.00876
ՀՎՀՀ 03803913
17.02. 2006թ. ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 02/02
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
<< >> << >> 2019թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԹԻՎ 2 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Մասիս 2019թ.

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 2 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի ավագանու 28.12.2005թ. թիվ 10 որոշման համաձայն, «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 2 մ/մանկապարտեզ բյուջետային հիմնարկի (գրանցված պետռեգիստրում 28.12.2005թ. գր.համարը 770003, վկ.համարը Բ000817) վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
3. Կազմակերպության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետության Արարատի մարզ, Մասիս քաղաք, նոր թաղամաս 8/2, 0801:
4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ,

դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:

7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:

8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:

9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:

11. Կազմակերպությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության:

12. Կազմակերպությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է կազմակերպության մեջ ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և

բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքի տարրական կարողություններին ու հմտություններին ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

13. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Կազմակերպությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

15. Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Կազմակերպության, երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Կազմակերպություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա

ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Կազմակերպությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Տարիքային խմբերում կրթական ծրագրերի յուրացման ժամկետները, շաբաթական պարապմունքների բաշխման ցանկը, օրինակելի ռեժիմները սահմանվում են կրթական ծրագրերով:

20. Նախադպրոցական ուսումնական հաստատություն կարող են ընդունվել նաև ներառական կրթության կարիք ունեցող երեխաներ:

21. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան:

22. Կազմակերպությունում երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

23. Կազմակերպության աշխատակիցները պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24. Կազմակերպության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

25. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

26. Կազմակերպության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

27. Երեխայի և կազմակերպության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

28. Կազմակերպությունում աշխատանքի են ընդունվում այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

29. Կազմակերպության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

30. Կազմակերպության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու կազմակերպության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ։

## V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն)։

32. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեության ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի։

33. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ՝ կազմակերպության հիմնադրումը.

բ)Կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ)Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ)Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է)Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

36. Կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով կազմակերպությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

37. Տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է կազմակերպության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմինների չվերապահված այլ լիազորություններ:

39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի պահանջների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

41. Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

42. Երաժշտական ղեկավարը՝

ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ, իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

43. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումը և պահպանությունը.

բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և ֆինանսական միջոցները:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Կազմակերպության սեփականության պահպանման ռիսկը կրում է կազմակերպությունը:

48. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը ըստ օրենքի:

50. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, համայնքի ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարվա ժամկետի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Կազմակերպությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՌՈՒԲԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 3

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9_Ի N _______ ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի
N ___________________ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
_____________ Դ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
<< >> 2019թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ _2_ ՕՐԻՆԱԿ
ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 17.02.2006թ.

ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 77.210.00880
ՀՎՀՀ 03804141
17.02.2006թ. ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 02/02
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
<< >> << >> 2019թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԹԻՎ 3 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Մասիս 2019թ.

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 3 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:

2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:

բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև՝ կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և ֆինանսական միջոցները:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

48. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը ըստ օրենքի:

50. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, համայնքի ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Կազմակերպությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ՝ ՌՈՒԲԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ N 7

ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ
ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9_Ի N _______ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ
ԱՎԱԳԱՆՈՒ 2019թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 9-Ի
N ___________________ ՈՐՈՇՄԱՄԲ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ
______________ Դ.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ
<< >> 2019թ.

ՏՊԱԳՐՎԱԾ Է ԸՆԴԱՄԵՆԸ _2_ ՕՐԻՆԱԿ
ԳՐԱՆՑՎԱԾ Է ՀՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ
ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ
ԿՈՂՄԻՑ 17.02.2006թ.
ԳՐԱՆՑՄԱՆ ԹԻՎ 77.210.00877
ՀՎՀՀ 03807304
17.02.2006թ. ԳՐԱՆՑՎԱԾ
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅԱՆ ԹԻՎ 02/02
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱՆՑՎԵԼ Է
ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԵՏԱԿԱՆ
ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
<< >> << >> 2019թ.

<<ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ

ԹԻՎ 7 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ >>

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

# ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(նոր խմբագրությամբ)

ք. Մասիս 2019թ

## I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի թիվ 7 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ կազմակերպություն) շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություն է, որն իրականացնում է նախադպրոցական կրթական ծրագրեր, Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան ձեռք է բերում և իրականացնում սույն կանոնադրությամբ ամրագրված՝ իր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ իրավունքներ և պարտականություններ:
2. Կազմակերպությունը իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ:
Կազմակերպությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիսի քաղաքային համայնքի ավագանու 28.12.2005թ. թիվ 10 որոշման համաձայն: «Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս քաղաքի թիվ 7 մ/մանկապարտեզ բյուջետային հիմնարկի (գրանցված պետռեգիստրում 11.09.1998թ. գր.հ. 770097, վկ.հ. 004569) վերակազմակերպման արդյունքում և հանդիսանում է նրա իրավահաջորդը:
3. Կազմակերպության գտնվելու վայրն է Հայաստանի Հանրապետություն, Արարատի մարզ, Մասիս քաղաք, Մասիս կայարան, Շիրակի փ. 0801:
4. Կազմակերպությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով: Կազմակերպությունն իր անունից ձեռք է բերում ու իրականացնում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում պարտականություններ, դատարանում կարող է հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:
5. Կազմակերպությունն ունի Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերով և իր՝ հայերեն անվանմամբ կլոր կնիք, կարող է ունենալ իր անվանմամբ ձևաթղթեր, խորհրդանիշ և այլ անհատականացման միջոցներ:

6. Կազմակերպությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ և բանկային հաշիվ:
7. Կազմակերպությունն այլ կազմակերպության հիմնադիր կամ մասնակից կարող է հանդիսանալ միայն հիմնադրի որոշմամբ:
8. Կազմակերպությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է համագործակցել օտարերկրյա կրթական հաստատությունների և կազմակերպությունների հետ:
9. Կազմակերպությունում չեն թույլատրվում քաղաքական և կրոնական կազմակերպությունների ստեղծումն ու գործունեությունը:

## II. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ԵՎ ՆՊԱՏԱԿԸ

10. Կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործունեության իրականացումն է:
11. Կազմակերպությունը կրթական գործունեությունն իրականացնում է ի շահ անհատի, հասարակության և պետության:
12. Կազմակերպությունը, համագործակցելով ընտանիքի հետ, ապահովում է կազմակերպության մեջ ընդգրկված նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, առողջության ամրապնդումն ու խնամքը, մայրենի լեզվով հաղորդակցվելը և դրա հիմքի վրա օտար լեզուների տիրապետման նախադրյալները, հաշվելու տարրական կարողությունների զարգացումը, վարվեցողության տարրական կանոններին, հայրենի բնության և բնապահպանության, պատմության և ազգային մշակույթի տարրերին ծանոթացումը, երեխայի մտավոր, բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական զարգացման հիմքերի ստեղծումը, հայրենիքի նկատմամբ սիրո և նվիրվածության զգացման ձևավորումը, աշխատանքի տարրական կարողություններին ու հմտություններին ծանոթացումը, զարգացման շեղումների կանխարգելումն ու շտկումը, դպրոցական ուսուցմանը նախապատրաստումը:

13. Կազմակերպության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, ազգային և համամարդկային արժեքների զուգորդման, անձի ազատ զարգացման, ինքնավարության ու կրթության աշխարհիկ բնույթի սկզբունքների վրա:

14. Կազմակերպությունը պատասխանատու է պետական չափորոշիչներին, նախակրթական պետական ծրագրերին, երեխաների տարիքային, ֆիզիոլոգիական և սոցիալ-հոգեբանական զարգացման առանձնահատկություններին, հակումներին ու ընդունակություններին համապատասխան ուսուցման մեթոդների և ձևերի ընտրության, ինչպես նաև նրանց կյանքի անվտանգության ու առողջության պահպանման համար:

15. Կազմակերպությունը կարող է զբաղվել հիմնադրի կողմից սահմանված ձեռնարկատիրական գործունեությամբ:

## III. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

16. Կազմակերպության, երեխաների համակազմի համալրման կարգն ու խմբերի առավելագույն խտությունը սահմանվում է պետական կրթական չափորոշիչներով:

17. Հաստատություն ընդունվում են մինչև վեց տարեկան երեխաները՝ նախադպրոցական պետական կրթական չափորոշիչներով սահմանված տարիքային հենքի և անհատական զարգացման առանձնահատկությունների հիման վրա ձևավորված խմբերում: Տարիքային հենքի վրա խմբերի ձևավորման անհնարինության դեպքում ձևավորվում են տարատարիք (խառը) խմբեր, որոնց գործունեությունն իրականացվում է կրթության պետական կառավարման լիազոր մարմնի գերատեսչական ակտերի պահանջներին համապատասխան:

18. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից

երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան: Կազմակերպությունը կարող է մշակել և նախարարության հետ համաձայնեցնելով, իրականացնել նաև նախադպրոցական կրթության հեղինակային ծրագրեր:

19. Նախադպրոցական տարիքը երեխայի ֆիզիկական, հոգեբանական և սոցիալական կայացման ժամանակաշրջանն է և յուրաքանչյուր տարիքի համար այն հաշվարկվում է մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 31-ը լրանալը

20. Նախադպրոցական ուսումնական հաստատություն կարող են ընդունվել նաև ներառական կրթության կարիք ունեցող երեխաներ:

21. Կազմակերպությունում կրթադաստիարակչական գործունեությունը կազմակերպվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) կողմից երաշխավորված նախադպրոցական կրթության համալիր ծրագրին համապատասխան:

22. Կազմակերպությունում երեխաների բժշկական սպասարկումն իրականացվում է համապատասխան մասնագիտական կրթություն ունեցող բժշկական աշխատողների միջոցով, որոնք հաստատության տնօրինության հետ պատասխանատվություն են կրում երեխաների առողջության, ֆիզիկական զարգացման, բուժկանխարգելիչ միջոցառումների անցկացման, սանիտարահիգիենիկ նորմերի, ռեժիմի պահպանման և սննդի որակի համար:

23. Կազմակերպության աշխատակիցները պարբերաբար ենթարկվում են բժշկական քննության:

## IV. ԿՐԹԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ

24. Կազմակերպության կրթադաստիարակչական գործընթացի մասնակիցները երեխաներն են, ծնողները (օրինական ներկայացուցիչները), մանկավարժական աշխատողները:

25. Երեխաների ընդունելության ժամանակ հաստատության տնօրինությունը պարտավոր է ծնողներին (օրինական ներկայացուցիչներին) ծանոթացնել կանոնադրությանն ու այլ փաստաթղթերի, որոնք կանոնակարգում են հաստատության գործունեությունը:

26. Կազմակերպության և ծնողների փոխհարաբերությունները կարգավորվում են նրանց միջև կնքված պայմանագրով:

27. Երեխայի և կազմակերպության աշխատողների փոխհարաբերությունները կառուցվում են համագործակցության, երեխայի անհատականության հանդեպ հարգանքի հիմքի վրա:

28. Կազմակերպությունում աշխատանքի են ընդունվում այն անձինք, ովքեր ունեն նախարարության հաստատած որակավորման բնութագրի պահանջներին համապատասխան անհրաժեշտ մասնագիտական-մանկավարժական որակավորում:

29. Կազմակերպության աշխատողների իրավունքները, սոցիալական երաշխիքները և արտոնությունները սահմանվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան, կազմակերպության կանոնադրությամբ և աշխատանքային պայմանագրով:

30. Կազմակերպության աշխատողներն իրավունք ունեն սահմանված կարգով մասնակցելու կազմակերպության կառավարմանը, համատեղությամբ կատարելու գիտական, ստեղծագործական և մանկավարժական բնույթի աշխատանքներ:

## V. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

31. Կազմակերպության կառավարումն իրականացնում է հիմնադիրը, նրա կողմից նշանակված գործադիր մարմինը՝ կազմակերպության տնօրենը (այսուհետ՝ տնօրեն):

32. Կազմակերպության հիմնադիրն ունի կազմակերպության գործունեությանն ու կառավարմանը վերաբերող ցանկացած հարց վերջնական լուծելու իրավունք՝ բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի:

33. Կազմակերպության հիմնադրի բացառիկ լիազորություններն են՝

ա) ավագանու համաձայնությամբ՝ կազմակերպության հիմնադրումը.

բ)կազմակերպության գործունեության առարկայի և նպատակների, այդ թվում՝ նրա կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության տեսակների սահմանումը.

գ)Կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և (կամ) ամրացվող՝ համայնքին պատկանող գույքի կազմի հաստատումը.

դ)Կազմակերպության կանոնադրության հաստատումը և դրանում փոփոխությունների կատարումը.

ե) Կազմակերպության կառավարման համակարգի սահմանումը.

զ) Կազմակերպության վերակազմակերպումը և լուծարումը.

է)Կազմակերպության լուծարման հանձնաժողովի ստեղծումը և լուծարման հաշվեկշռի հաստատումը.

ը)Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ հարցերի լուծումը:

34. Համայնքի ղեկավարն իրականացնում է կազմակերպության ընդհանուր կառավարումը, ապահովում նրա բնականոն գործունեությունը և պատասխանատվություն է կրում դրանց չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

35. Համայնքի ղեկավարը՝

ա) սույն կանոնադրությամբ սահմանված կարգով իրականացնում է կազմակերպության կառավարման մարմինների ձևավորումը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

բ) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության գործունեության նկատմամբ.

գ) կասեցնում կամ ուժը կորցրած է ճանաչում կազմակերպության տնօրենի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին հակասող հրամանները, հրահանգները, կարգադրությունները և ցուցումները.

դ) լսում է կազմակերպության գործունեության մասին հաշվետվությունները, քննում դրա գործունեության վերստուգման արդյունքները.

ե) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության ամրացված համայնքային սեփականության օգտագործման և պահպանության նկատմամբ.

զ) համայնքի ավագանու որոշմամբ՝ կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված դեպքերում համաձայնություն է տալիս գույքի օտարման կամ վարձակալության հանձնման համար.

է) հաստատում է կազմակերպության տարեկան հաշվետվությունները և տարեկան հաշվեկշիռը.

ը) իրականացնում է կազմակերպության կանոնադրությամբ նախատեսված այլ գործառույթներ:

36. Կազմակերպության ուսումնադաստիարակչական աշխատանքի արդյունավետ կազմակերպման նպատակով ձևավորվում է խորհրդակցական մարմին՝ մանկավարժական խորհուրդ: Համայնքի և ծնողների հետ արդյունավետ համագործակցության նպատակով կազմակերպությունում կարող են ստեղծվել ծնողական, հոգաբարձուների և այլ խորհուրդներ:

37. Տնօրենն իրականացնում է կազմակերպության ընթացիկ գործունեության ղեկավարումը: Տնօրենն օրենքներով, համայնքի ղեկավարի, ավագանու որոշումներով, սույն կանոնադրությամբ և իրեն վերապահված լիազորությունների սահմաններում ղեկավարում է կազմակերպության գործունեությունն ու կրում պատասխանատվություն օրենքների, այլ իրավական ակտերի, համայնքի ղեկավարի որոշումների, սույն կանոնադրության և կնքված պայմանագրերի պահանջները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար:

38. Տնօրենը՝

ա) առանց լիազորագրի հանդես է գալիս կազմակերպության անունից, ներկայացնում նրա շահերը և կնքում է գործարքներ.

բ) սահմանում է կազմակերպության կառուցվածքը և կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությունները.

գ) նախագահում է կազմակերպության մանկավարժական խորհրդի նիստերը.

դ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, համայնքի ղեկավարի և ավագանու որոշումներով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տնօրինում է կազմակերպության գույքը, այդ թվում՝ ֆինանսական միջոցները.

ե) տալիս է կազմակերպության անունից հանդես գալու լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր.

զ) աշխատանքի նշանակում և աշխատանքից ազատում է կազմակերպության աշխատողներին, նրանց նկատմամբ կիրառում խրախուսման միջոցներ և նշանակում կարգապահական տույժեր.

է) բանկերում բացում է հաշվարկային հաշիվներ.

ը) կատարում է աշխատանքի բաշխում իր տեղակալների միջև.

թ)օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված իր լիազորությունների սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս պարտադիր կատարման համար ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.

ժ) իրականացնում է մանկավարժական կադրերի և սպասարկող անձնակազմի ճիշտ ընտրություն և անհրաժեշտ պայմաններ ստեղծում նրանց մասնագիտական մակարդակի բարձրացման համար.

ժա) վերահսկողություն է իրականացնում կազմակերպության աշխատողների կողմից իրենց աշխատանքային պարտականությունների կատարման նկատմամբ.

ժբ) ապահովում է ներքին աշխատանքային կարգապահության կանոնների, աշխատանքի պաշտպանության և անվտանգության տեխնիկայի պահպանումը.

ժգ) կազմում է կազմակերպության հաստիքային ցուցակն ու ծախսերի նախահաշիվը և դրանք ներկայացնում կառավարման մարմինների հաստատմանը.

ժդ) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող և կազմակերպության կառավարման մյուս մարմիններին չվերապահված այլ լիազորություններ:

39. Տնօրենի բացակայության դեպքում, համայնքի ղեկավարի գրավոր որոշման (հրամանի) համաձայն, տնօրենի լիազորություններն իրականացնում է այլ անձ:

40. Մեթոդիստը (տնօրենի ուսումնական գծով տեղակալը)՝

ա) իրականացնում է կրթադաստիարակչական աշխատանքի մեթոդական ղեկավարումը.

բ) ապահովում և վերահսկում է տիպային ծրագրի դրույթների ու մեթոդական հանձնարարականների կատարումը.

գ) պատասխանատու է կրթադաստիարակչական աշխատանքների որակի և արդյունքի համար.

դ) կազմակերպում է մանկապարտեզի մեթոդկաբինետի աշխատանքը.

ե) ուսումնասիրում է դաստիարակների առաջավոր փորձը և ընդհանրացնում այն.

զ) դաստիարակներին մշտապես հաղորդակից է դարձնում մանկավարժական գիտությունների նորույթներին, ծանոթացնում մեթոդական հանձնարարականներին.

է) կազմակերպում է աշխատանք ծնողների շրջանում:

41. Դաստիարակը՝

ա) պարտավոր է պահպանել երեխաների կյանքը, աշխատանք տանել նրանց առողջության ամրապնդման ուղղությամբ, զարգացնել նրանց ստեղծագործական երևակայությունը.

բ) պատասխանատու է երեխաների համակողմանի զարգացման և դաստիարակության համար.

գ) մշտապես համագործակցում է երեխայի ընտանիքի հետ, կազմակերպում աշխատանք ծնողների շրջանում:

42. Երաժշտական ղեկավարը՝

ա) տիպային ծրագրին համապատասխան, դաստիարակների հետ համատեղ, իրականացնում է երեխաների երաժշտական դաստիարակությունը.

բ) ծնողների շրջանում խորհրդատվություն է կազմակերպում երեխաների երաժշտական, գեղագիտական դաստիարակության հարցերի շուրջ:

43. Տնտեսական մասի վարիչը (տնօրենի տնտեսական աշխատանքի գծով օգնականը)՝

ա) կազմակերպում է մանկապարտեզի տնտեսական սպասարկումը, անհրաժեշտ մթերքի, գույքի և սարքավորումների ստացումը և պահպանությունը.

բ) մասնակցում է ճաշացուցակի և սննդամթերքի պահանջագիր-հայտերի կազմմանը.

գ) հետևում է մանկապարտեզի տեղամասի, շենքի, գույքի և սարքավորումների վիճակին, միջոցներ է ձեռնարկում դրանք ժամանակին վերանորոգելու համար.

դ) պատասխանատու է սպասարկող անձնակազմի աշխատանքային և կատարողական կարգապահության համար:

## VI. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

44. Կազմակերպության սեփականությունը ձևավորվում է նրա հիմնադրման ժամանակ և հետագայում հիմնադրի կողմից սեփականության իրավունքով նրան հանձնվող, ինչպես նաև կազմակերպության գործունեության ընթացքում ձեռք բերված գույքից:

45. Կազմակերպությունն իրավունք ունի օրենքին, հիմնադրի որոշումներին և (կամ) սույն կանոնադրությանը համապատասխան իր հայեցողությամբ տիրապետելու, տնօրինելու և օգտագործելու սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքը և ֆինանսական միջոցները:

46. Հիմնադիրը սեփականության իրավունքով կազմակերպությանը պատկանող գույքի նկատմամբ չունի իրավունքներ՝ բացառությամբ կազմակերպության լուծարումից հետո մնացած գույքի:

47. Կազմակերպության սեփականության պահպանման հոգսը կրում է կազմակերպությունը:

48. Կազմակերպության սեփականության վրա կարող է տարածվել բռնագանձում՝ միայն դատական կարգով:

49. Հիմնադիրն իրավունք ունի հետ վերցնելու իր կողմից կազմակերպությանն ամրացված գույքը ըստ օրենքի:

50. Կազմակերպությունն իրավունք չունի ամրացված գույքը կամ դրա նկատմամբ իր իրավունքներն օտարելու, գրավ դնելու, անհատույց օգտագործման հանձնելու: Կազմակերպությունն իրավունք ունի իրեն ամրացված գույքը հիմնադրի անունից հանձնելու վարձակալության, եթե դա արգելված չէ հիմնադրի, համայնքի ավագանու որոշմամբ կամ սույն կանոնադրությամբ: Ամրացված գույքի վարձակալության ժամկետը չի կարող սահմանվել 1 տարուց ավելի՝ բացառությամբ հիմնադրի կողմից սահմանված դեպքերի: Ամրացված գույքի օգտագործման արդյունքում կազմակերպության ստացած եկամուտները կազմակերպության սեփականությունն են: Կազմակերպությանն ամրացված գույքի օգտագործման ընթացքում առաջացած անբաժանելի բարելավումները հիմնադրի սեփականությունն են:

Կազմակերպության լուծարման դեպքում նրա գույքի օգտագործման և տնօրինման կարգը որոշում է համայնքի ավագանին:

51. Կազմակերպությանը ֆինանսավորում է հիմնադիրը: Կազմակերպության ֆինանսական միջոցները գոյանում են համայնքի բյուջեի և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված լրացուցիչ աղբյուրներից:

52. Կազմակերպության ֆինանսավորման լրացուցիչ աղբյուրներն են՝

ա) հիմնադրի կողմից թույլատրված ձեռնարկատիրական գործունեության իրականացումից գոյացած միջոցները.

բ) բարեգործական, նպատակային ներդրումները, Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա կազմակերպությունների ու քաղաքացիների նվիրատվությունները.

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված և կազմակերպության կանոնադրական խնդիրներին չհակասող գործունեությունից ստացված միջոցները:

53. Կազմակերպության գործունեության տարեկան ֆինանսական հաշվետվությունների հավաստիությունը ենթակա է աուդիտի (վերստուգման)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

## VII. ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

54. Կազմակերպությունը վերակազմակերպվում և լուծարվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ — ՎԱՐԴԱՆ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏ — ՌՈՒԲԵՆ ԱԹԱՆԵՍՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 72-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,9 ՀԱ ՀՈՂԱՄԱՍԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մասիս քաղաքային համայնքի ավագանի որոշում է.

1. Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության 0,9հա 5-րդ կարգի վարելահողը (ծածկագիր՝ 03-003-0328-0018, վկայական N 04092019-03-0049) աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու՝ համաձայն կից հավելվածի:
2. Հաստատել մեկնարկային գին տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքը:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված

Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2019 թ.
սեպտեմբերի 9-ի թիվ 126-Ա որոշման

# ՑՈՒՑԱԿ
## Աճուրդ- վաճառքի միջոցով օտարման ենթակա հողի

| Համ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը (հա) | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը << դրամ >> | Սահմանափակումներ կա |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | Գյուղատնտեսական | ք. Մասիս | 03-003-0328-0018 | 0.9 | գյուղատնտեսական | վարելահող | 5-րդ կարգի վարելահող | 893250 | չունի |

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Համայնքապետարանի գլխ. մասնագետ Ա. Հարությունյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 73-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի պահանջներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի բնակելի կառուցապատման 0,18144 հա /ծածկագրեր՝03-003-0126-0118, 03-003-0136-0028, 03-003-0135-0180, 03-003-0128-0619, 03-003-0128-0623, 03-003-0138-0355, 03-003-0128-0625, 03-003-0128-0624, 03-003-0109-0195, 03-003-0108-0136, 03-003-0135-0181, 03-003-0142-0027/ բնակավայրերի խառը կառուցապատման 0,22606 հա/ծածկագրեր՝ 03-003-0298-0714,03-003-0156-0006, 03-003-0085-0076, 03-003-0134-0023, 03-003-0156-0009, 03-003-0156-0010/ և արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության 0,1293 հա /ծածկագրեր՝ 03-003-0296-0220, 03-003-0296-0219,03-003-0296-0211, 03-003-0443-0056, 03-003-0422-0048/ հողերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարելու համաձայն հավելված 1-ի:

2.Հաստատել մեկնարկային գին՝ տվյալ պահին գործող հողի կադաստրային արժեքի չափով:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՎԵԼՎԱԾ 1
Մասիս քաղաքային համայնքի ավագանու 2019թ.
սեպտեմբերի 9-ի N 13-Ա որոշման

# Ցուցակ

## Աճուրդ-վաճառքի միջոցով օտարման ենթակա հողերի

| համ | Անվանումը | Գտնվելու վայրը | Ծածկագիրը | Մակերեսը (հա) | Նպատակային նշանակությունը | Հողատեսքը | Գործառնական նշանակությունը | Մեկնարկային գինը (ՀՀ դրամ) | Սահմանափակումներ |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս 1-ին փողոց թիվ 2/5 | 03-003-0126-0118 | 0,02211 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 650034 | չկա |
| 2 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Դպրոցականների փող. թիվ 19/1 | 03-003-0136-0028 | 0,02078 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 610932 | չկա |
| 3 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Ն. թ.Շիրազի փող. թիվ 29/6-1 | 03-003-0135-0180 | 0,009 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 264600 | չկա |
| 4 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Ն.թ, թիվ 10/8 | 03-003-0128-0619 | 0,00222 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 65268 | չկա |
| 5 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Ն.թ . թիվ 37/19 | 03-003-0128-0623 | 0,01722 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 506268 | չկա |
| 6 | բնակելի կառուցապատման | ք. Մախս Ն.թ. Շիրազի փող. թիվ 11/8 | 03-003-0138-0355 | 0,02554 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 750876 | չկա |
| 7 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Շիրազի փող. թիվ 2/2 | 03-003-0128-0625 | 0,01478 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 434532 | չկա |
| 8 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս նոր թաղ. թիվ 27/18 | 03-003-0128-0624 | 0,00234 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ | 68796 | չկա |
| 9 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս 3-րդ թաղամաս թիվ 13/2-1 | 03-003-0109-0195 | 0,0032 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 94080 | չկա |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 10 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Հերացու փող. թիվ 12/18 | 03-003-0108-0136 | 0,00205 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 60270 | չկա |
| 11 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս Շիրազի փող. թիվ 29/6-2 | 03-003-0135-0181 | 0,038 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 1117200 | չկա |
| 12 | բնակելի կառուցապատման | ք. Մասիս 7-րդ.թ, 2-րդ փող. թիվ 54 | 03-003-0142-0027 | 0,0242 | բնակավայրերի | բնակելի կառուցապատ. | բնակելի կառուցապատ. | 711480 | չկա |
| 13 | խառը կառուցապատման | ք. Մսիս 3-րդ.թաղ թիվ 26/32-1 | 03-003-0298-0714 | 0,02962 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 870828 | չկա |
| 14 | խառը կառուցապատման | ք. Մասիս 4-րդ թաղ. 3-րդ փող. թիվ 29 | 03-003-0156-0006 | 0,07205 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 2118270 | չկա |
| 15 | խառը կառուցապատման | ք. Մասիս Երևանյան փող. թիվ 54/1 | 03-003-0085-0076 | 0,00668 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 196392 | չկա |
| 16 | խառը կառուցապատման | ք. Մասիս Դպրոցականների փող. թիվ 3/11-2 | 03-003-0134-0023 | 0,01771 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 520674 | չկա |
| 17 | խառը կառուցապատման | ք. Մասիս 4-րդ թաղ. 3-րդ փող. թիվ 31 | 03-003-0156-0009 | 0,06 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 1764000 | չկա |
| 18 | արդյունաբերական օբյեկտների | ք. Մասիս Էջմիածնի խճուղի թիվ 5/1 | 03-003-0296-0220 | 0,03661 | արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | արդյունաբերական օբյեկտների | 1076334 | չկա |
| 19 | արդյունաբերական օբյեկտների | ք. Մասիս Էջմիածնի խճուղի թիվ 3/5 | 03-003-0296-0219 | 0,0108 | արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | արդյունաբերական օբյեկտների | 317520 | չկա |
| 20 | արդյունաբերական օբյեկտների | ք. Մասիս Էջմիածնի խճուղի թիվ 7/12 | 03-003-0296-0221 | 0,0075 | արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերական օբյեկտների | արդյունաբերական օբյեկտների | 220500 | չկա |

| | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 21 | արդյունաբերական օբյեկտների | ք. Մասիս Էջմիածնի խճուղի թիվ 6/7 | 03-003-0443-0056 | 0,06439 | արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերակա ն օբյեկտների | արդյունաբերակ ան օբյեկտների | 1893066 | չկա |
| 22 | արդյունաբերական օբյեկտների | ք. Մասիս Սայաթ-Նովայի փող. թիվ 11/2 | 03-003-0422-0048 | 0,01 | արդյունաբերական ընդերք օգտագործման և այլ արտադրական նշանակության | արդյունաբերակա ն օբյեկտների. | արդյունաբերակ ան օբյեկտների | 294000 | չկա |
| 23 | խառն կառուցապատման | ք.Մասիս 4-րդ թաղ. 3-րդ փող. թիվ 33 | 03-003-0156-0010 | 0,04 | բնակավայրերի | խառը կառուցապատ. | խառը կառուցապատ. | 1176000 | չկա |

Աշխատակազմի քարտուղար Վ. Գաբրիելյան

Համայնքապետարանի գլխավոր մասնագետ Վ.Պողոսյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am


## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 74-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Անուշ Մինասյանի խնդրանքին /մտից մատյանի՝06.09.2019թ. թիվ 999/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս,Դպրոցականների փողոց, թիվ 9/9-1 հասցեումով 0,00034 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0131-0195/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Անուշ Մինասյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 9996 / ինը հազար ինը հարյուր իննսունվեց / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 75-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Արամայիս Աղջոյանի խնդրանքին /մտից մատյանի՝30.08.2019թ. թիվ 974/1 /. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս, թիվ 10/7 հասցեումով 0,00056 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-00128-0621/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Արամայիս Աղջոյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 16464 / տասնվեց հազար չորս հարյուր վաթսունչորս / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

**Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 76-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Սերգո Արզումանյանի խնդրանքին /մտից մատյանի՝04.09.2019թ. թիվ 990/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս, Շիրազի փողոց,2-րդ նրբանցք թիվ 15/3 հասցեումով 0,00237 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0138-0315/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Սերգո Արզումանյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 69678 / վաթսունինը հազար վեց հարյուր յոթանասունութ / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 77-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՍ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԸ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԻՋՈՑՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Մնացական Նազարյանի խնդրանքին /մտից մատյանի՝04.09.2019թ. թիվ 997/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Հայաստանի Հանրապետության Մասիս քաղաքային համայնքի սեփականություն հանդիսացող ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս, թիվ 30/7-1 հասցեով 0,00051 հա բնակավայրերի բնակելի կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0135-0179/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Մնացական Նազարյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 14994 / տասչորս հազար ինը հարյուր իննսունչորս / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 78-Ա

### ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի պահանջները և որ նշված տարածքները գտնվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1. Թույլատրել Մասիս քաղաքային համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Հանրապետության փողոց, թիվ 2/6 /ծածկագիր՝ 03-003-0128-0618/ հասցեով 0,0001 հա բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողատարածքը կառուցապատման իրավունքով արտամրցութային կարգով 50 տարի ժամկետով տրամադրել ԱՁ Ռաֆայել Գեղամյանին:

2. Տարեկան վարձավճար սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 79-Ա

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ԱՐՏԱՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի պահանջները և որ նշված տարածքները գտնվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում և ընդառաջելով Արտակ Սարգսյանի խնդրանքով /մտից մատյան՝ 26.04.2019թ.թիվ 397/.Մասիս **քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. Թույլատրել Մասիս քաղաքային համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, Կենտրոնական հրապարակ, թիվ 3/40 /ծածկագիր՝ 03-003-0130-0194/ հասցեով 0,00096 հա բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողատարածքը կառուցապատման իրավունքով արտամրցութային կարգով 25 տարի ժամկետով տրամադրել Արտակ Սարգսյանին:
2. Տարեկան վարձավճար սահմանել 5000 /հինգ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 80-Ա

### ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔԸ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի պահանջներով, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշման 46.2 կետի պահանջները և որ նշված տարածքները գտնվում են Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում՝ **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է.**

1.Թույլատրել Մասիս քաղաքային համայնքի ղեկավարին համայնքային սեփականություն հանդիսացող՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս,1-ին փողոց, թիվ 2/1 /ծածկագիր՝ 03-003-0127-0020/ հասցեով 0,08461 հա բնակավայրերի նպատակային նշանակության ընդհանուր օգտագործման գործառնական նշանակության հողատարածքը 25 տարի ժամկետով կառուցապատման իրավունքով տրամադրելու համար կազմակերպել մրցույթ:

2. Մեկնարկային գին սահմանել 25000 /քսանհինգ հազար/ ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

**Համայնքի ղեկավար՝** ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 81-Ա

## ԱՇՈՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Աշոտ Հարությունյանի խնդրանքին /մտից մատյանի՝05.04.2019թ. թիվ 318/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, 3-րդ թաղամաս, Հերացու փողոց, թիվ 12/30 հասցեում Աշոտ Հարությունյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած 0,0023 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0108-0093/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Աշոտ Հարությունյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 67620 /վաթսունյոթ հազար վեց հարյուր քսան / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
# ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 82-Ա

ՍԱՄՎԵԼ ՂԱՐԱԽԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՐՀԵՍՏԱՆՈՑ-ԽԱՆՈՒԹԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Սամվել Ղարախանյանի խնդրանքին /մտից մատյանի՝11.07.2019թ. թիվ 765/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Հանրապետության փողոց թիվ 1/21 հասցեում Սամվել Ղարախանյանին պատկանող արհեստանոց-խանութի զբաղեցրած վարձակալած 0,002 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0131-0035/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Սամվել Ղարախանյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 58800 / հիսունութ հազար ութ հարյուր / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ
ՄԱՍԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Մասիս համայնք
ՀՀ, Արարատի մարզ, ք.Մասիս, Կենտրոնական հրապարակ թիվ 4,
հեռ՝ (0236) 43040,40440, էլ. փոստ՝ masis.ararat@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

09 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2019թվականի N 83-Ա

ԱՎԱԳ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՎՏՈՏՆԱԿԻ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՎԱՐՁԱԿԱԼԱԾ ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ,,Տեղական ինքնակառավարման մասին,, Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 66-րդ հոդվածի պահանջներով և ընդառաջելով Ավագ Հովսեփյանի խնդրանքին /մտից մատյանի՝11.06.2019թ. թիվ 613/. **Մասիս քաղաքային համայնքի ավագանին որոշում է՝**

1. ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, նոր թաղամաս,Գ.Նժդեհի փողոց,2-րդ շարք, թիվ 8 հասցեում Ավագ Հովսեփյանին պատկանող ավտոտնակի զբաղեցրած վարձակալած 0,0024 հա բնակավայրերի հասարակական կառուցապատման հողատարածքը /ծածկագիր 03-003-0139-0089/, որը չի գտնվում Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողերի ցանկում, ուղղակի վաճառքով օտարել Ավագ Հովսեփյանին:

2.Հողամասի ուղղակի վաճառքի գինը կազմում է 70560 / յոթանասուն հազար հինգ հարյուր վաթսուն / ՀՀ դրամ, 1 քմ-ի արժեքը 2940 /երկու հազար ինը հարյուր քառասուն/ՀՀ դրամ:

Կողմ -8 Դեմ -0 Ձեռնպահ -0

ԵՂԻԱԶԱՐՅԱՆ ԱՐՍԵՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՂԱԶԱՐՅԱՆ ԱՐՄԱՆ

ՄԱՐԳԱՐՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՇԱՀՎԵՐԴՅԱՆ ԱԲՐԱՀԱՄ

ՌԱՖԱՅԵԼՅԱՆ ՍԱՐԳԻՍ

ՍԱՎԱԴՅԱՆ ԳԱՐԻԿ

ՓԱՀԼԵՎԱՆՅԱՆ ԳԵՂԱՄ

Համայնքի ղեկավար՝ ԴԱՎԻԹ ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ